

---

---

ԿՈՉԱԿԱՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀԱՅՐԵՆՆԵՐՈՒՄ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայրենները գերազանցապես բանահյուսական չափածո ժանրի լիրիկական ստեղծագործություններ են: Դրանք միջոց են դարձել ուղղակիորեն կամ փոխաբերաբար արտահայտելու ամենատարբեր զգացումներ, զգացմունքներ, դատողություններ (և այլն), որոնք կարող էին վերաբերել իրեն՝ հեղինակին, խոսակցին (խոսակիցներին) կամ ուրիշ(ներ)ի: Հայրեններում արծարծվող թեմաների համար ավելի հաճախ արտահայտության միջոց են ծառայել 2-րդ դեմքով կամ վերջինիս համադրությամբ ձևավորված շարահյուսական կառույցները: Նման ձևով կառուցված հայրեններում պատահական չէ կոչականների առկայությունը, որոնք, ինչպես գիտենք, ուղղակի խոսքի բաղադրիչ մասն են կազմում:

Կեօզ՝ լ, դուն հերիք արա՛:

Կտրի՛ ճ, մի՛ անխելքանար (263):

Ամ ի՛ նչ լինենամ, գերի՛ս (267):

Հա՛ յ իմ բոլորեալ լուսի՛ն,  
Շատ բարև տար իմ կօզալին (195)<sup>2</sup>:

Միջին հայերենում, մասնավորապես՝ հայրեններում տեղ գտած կոչականներն ու շարժողական են արժանի հատկապես այն տեսանկյունից, որ ուրվագծում են աշխարհաբարի չափածո ստեղծագործություններում հաճախակի գործածվող կոչականի անցած երկարամյա ուղին:

Հայրեններում (և առհասարակ) կոչականի շարահյուսական գործառնությունը հիմնականում հանդես են գալիս թե՛ հատուկ և թե՛ հասարակ անձնանիշ գոյականներ:

Հայե՛ ր, ամ դուք է՞ր կու լայք,  
Գիտե՛ք, որ ձեր Տէրն տի գայ (326):

Դաւի՛թ մարգարէ, իմ յոյս,

---

<sup>1</sup> Հայրեններ, աշխատասիրությամբ Աս. Մնացականյանի, Երևան, 1986, էջ 104 (այսուհետև էջերը կնշվեն մեջբերումներին կից):

<sup>2</sup> Հարկ է նկատել, որ ուղղակի խոսքի կազմում կոչականների առկայությունը կարևոր, բայց ոչ պարտադիր պայման է, ինչի մասին վկայում են առանց կոչականի կազմված բազմաթիվ հայրենները, որով նույնպես հետապնդվում է խոսքի ոճավորման նպատակ: Օրինակ՝

- Չան նուռն, որ ի քեզ տվի,  
Կտրե՛, տե՛ս՝ քանի հատ ունի.  
Ամեն հատի պաք մի տուր,  
Աւելին հարամ թող լինի... (162):

*Շատ մեղկունք ունիմ, թէ թողուս (59):*

*Իմ հոգւոյս հոգեկ եարո՛ւմ,  
Քանի որ քովէդ գնացի.... (239):*

Հատկանունների շարքում հիշատակվում են աստվածաշնչյան և պատմական հանրահայտ հերոսների անուններ, ինչպես նաև Աստուած Բառն իր մի քանի համանիշներով՝ Պատրոն, Հայր, Ստեղծող, Յիսուս, Տէր, Ստեղծո՛ղ, Պարո՛ն, Քրիստո՛ս և այլն:

*Դարե՛հ, իմ արինս անկար (159):*

*– Իմ աստուածախօս Մովսէ՛ս,*

*Մեր Տէրն յէ՛ր մեզ է խռոված (444):*

*Պատրո՛ն (=Աստված – Գ. Խ.), դու ի վայր հայէ՛ (48):*

*Տէ՛ր, փրկէ ի մարդոյ շառէն (328):*

*Կանչեմ հող ի վեր, ՍտեղծօԲի,  
Չամենայն դարիս դու պահէ՛ (327):*

Ինչ վերաբերում է անձնանիշ հասարակ անուններին, ապա դրանցից կոչականի գործառույթով հաճախադեպ են ազգակցություն ցույց տվող և բառապաշարի ակտիվ շերտում մարդկային փոխհարաբերություն ներկայացնող որոշ անձնանիշ գոյականներ, ինչպես՝ եար, տղայ, մանուկ (մանկտիք), եղբայր, մանկիկ, հարսնուկ, եարուկ, հայր, մարիկ, մարդ և այլն: Օրինակ՝

*Ասա՛ ու լսէ՛, իմ եա՛ր (46):*

*– Գնա՛, ծոյ տղա՛յ տխմար (196):*

*Մանկտի՛ք, ձեր արեն ասեմ,  
Լսեցի՛ լեզուս կապեցաւ (189):*

Կոչականի դերով հանդիպում են նաև կենդանանիշ (գերագանցապես՝ թռչուն անվանող) գոյականներ՝ բազա, բազեկ, կաքաւ, արծիւ և այլն, որոնք նույնպես գործածվում են փոխաբերական իմաստներով. տվյալ կենդանիներին վերագրվող հատկանիշներով փոխաբերաբար բնութագրվում են խոսակիցները: Ընդ որում, թռչուն անվանող գոյականների մի մասը (օրինակ՝ կաքաւ) ներկայացնում է իգական սեռի խոսակից, իսկ մի մասը (օրինակ՝ շահէն)՝ արական սեռի՝ ըստ իրենց՝ իրականում հանդես բերած բնույթի.

*– Թրռի՛, անհաւատ բազեկ... (79):*

*Ա՛յ իմ ձերմակծոց կաքաւ,  
Ճերմակծոց ու ծինն ի վերայ (211):*

*– Արծի՛ւ, ամ արի, թռի (169):*

Նկատելի է, որ որոշ դեպքերում կենդանանիշ գոյականների կիրառությունը կատարվում է ուղղակի իմաստով.

– Կարա՛ւ, դու հերիք խօսիս (271):

Անձանիշ գոյականներին թվով չեն զիջում կոչականների դերով գործածվող իրանիշ գոյականները, որոնց շարքում աչքի են ընկնում բույս, աշխարհագրական տեղանք, երկնային մարմին, առօրյա գործածական իր, օրվա պահ, մարմնի մաս (և այլն) ցույց տվող մի շարք գոյականներ՝ նշենի, գինի, աղբերաց արիւն, ուրաք, դումաշ, ճրագ, լուսին, աչ, լեզու, երես, սրտիկ, բերան, առաւօտ, գիշեր և այլն: Ինչպես տեսնում ենք, կոչականի դերով գործածվող իրանիշ գոյականներն իմաստային դաշտերով ավելի բազմազան են, քան անձանիշ և կենդանանիշ գոյականները.

Ա՛յ իմ՝նշենի ծաղիկ, Դեղնեցար ու դարձար ի նուշ (47):	Ա՛յ քարե կարմնջնի, Ա՛յ սարեր, ա՛յ ձորեր, Գիտացէ՛ք, եար եմ կորուսել.
Ճերմա՛կ ու կարմիր գինի, Քանի՛ մէկ քո չարն ու քանի՛ (51):	Ա՛յ քարեր, ա՛յ թփեր, Աճափ ի ձեզ չէ՞ եկել, Ի ձեզ չէ՞ անցել (169):

Իրանիշ գոյականներից կոչականի, այն է՝ անձանիշ առարկայի գործառույթով հանդես են գալիս նաև փաղաքշանք արտահայտող որոշ բառեր, ինչպես՝ հոգի, նազլու («նազելի», «չքնաղ»)<sup>3</sup>, եւարու («զավակ», «որդի», «սիրելի»), որոնցով նույնպես կարելի է դիմել որոշակի անձի՝ միաժամանակ չբացահայտելով նրա ով լինելը.

Ես աչք ու դուն՝ լոյս, հոգի՛,  
Առանց լոյս՝ աչքըն խաւարի (45):

Դարձի՛ր, ի յետիտ նայէ,  
Ա՛յ նազլում, գէմ Աստուած ունիս (164):

Կոչական կապակցությունների մի մասում կա՛մ կոչական գերադաս անդամն է արտահայտվել միջին հայերենում լայն տարածում գտած փաղաքշական ածանցներով կազմված գոյականներով՝ աչկունք, լեզուակ, հոգեկ, մարիկ, մորձիկ, սրտիկ և այլն, կա՛մ դրանց որոշիչ լրացումը՝ արտահայտված գոյականով կամ ածականով՝ հաւատիկ, կարմրիկ, փոքրիկ և այլն, ինչպես՝

Նոգե՛կ, դու գայր ինձ կասես (188):

....Արգիլէ՛, մարի՛կ, թէ կարես (368):

Ա՛յ իմ հաւատիկ Աստուած.... (276):

Փոքրի՛կ, բոլորիկ դոնակ.... (338) և այլն:

<sup>3</sup> Փոխառյալ բառերի իմաստները բերում ենք Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի կազմած «Միջին հայերենի բառարանից» (Երևան, 2009)՝ մասնակի փոփոխություններով և հավելումներով, որոնք տեղ են գտել Ա. Մնացականյանի վերը նշված աշխատասիրության բառարանում (էջ 1059-1088):

Կասկած չկա, որ նԲ իրանիշ, նԲ կենդանանիշ գոյականներով կոչականները, անկախ այն բանից՝ ուղիղ իմաստով են գործածվել, թե փոխաբերաբար, սովյալ կիրառության մեջ անպայմանորեն անձնավորված են.

Հա՛յ իմ սերկևիլ մորճիկ,  
Յի՛նչ աստէն էիր սիրելու (339):

Փոքրի՛կ, բոլորիկ շամամ,  
Երբ լինի՛ սիրոյդ տիրանամ (338):

Կոչականով կառուցված խոսքը (անկախ այն բանից՝ կոչականը հաստուկ անվամբ է արտահայտված, թե հասարակ), ի տարբերություն առանց կոչականի խոսքի, ունի իր՝ քերականորեն արտահայտված հասցեատերը, որը գոնե հեղինակի համար որոշակիորեն հայտնի անձ է կամ անձնավորված իր. դա մի դեպքում իր «եարն» է, մյուս դեպքում ուղղակի կամ փոխաբերական իմաստով գործածված «նշենին» և այլն:

Գոյականներից բացի՝ հայրեններում կոչականի արտահայտման միջոց են ծառայում նաև մի շարք փոխանուններ: Հմմտ.

Ասի. «Ո՛վ աղուր հարսնուկ,  
Ո՛ւր կերթասս՝ քո ժամն է հարամ...» (257)

և՝

Իմ աղուր՝ բարակ ի երկան,  
Գեղեցիկ ու խիստ սիրուն ես (60):

Հայրենների համար տիպական է ածականների (երբեմն էլ այլ խոսքի մասերի)՝ իբրև փոխանուն հանդես գալը կոչականի դերով: Նշված կիրառության մեջ փոխանունները մնում են աննշանակի, այսինքն՝ ձևային որևէ փոփոխության չեն ենթարկվում, քանի որ կոչականն արտահայտվում է ուղղական հոլովի անորոշ առմամբ:

- Աղուո՛ւր, քեզ բանիկ մ՛ ասեմ (56):

Գընո՛ղ, գընե՛, մի՛ վախել,  
Վա՛յ հազար իմ կորսնօղին (178):

Իմ մանկութենե՛ս սիրած,  
Մի՛ կենար հետ ինձ նենգաւոր (153):

Այս դեպքում, սակայն, պարտադիր է փոխանունների հնչերանգային փոփոխությունը. փոխանունների համար կոչականի դերով գործածվելու հնարավորություն են ստեղծում շեշտադրությունը և տրոհումն այլ անդամներից.

Պագիկ, մ՛ յերեսէտ կուզեմ,  
Անհաւա՛տ, մեռնիս թէ չըտաս (226):

Կեօզե՛լ, դուն հերիք արա (104):

Կոչականի դերում փոխանուն գործածելով՝ հեղինակը դիմում է խոսքի համառոտության. բառային մեկ միավորի միջոցով անվանում է ն՛ առարկան, ն՛ այն հատկանիշը, որով բնութագրվում է վերջինս:

Աղու՛ր, Աստուած (է-Գ.Խ.) զքեզ ըստեղծել (134)<sup>4</sup>:

Ամ ի՛նչ լինենամ, գերի՛ս (267):

Կանչեմ հօտ ի վեր, Ստեղծօ՛ղ,  
Զամենայն դարիս դու պահէ (222):

Ո՞ւր էիր, ուսկի՞ց եկիր,  
Անձանօ՛թ, ըզիս սիրեցիր (159):

Նկատենք, որ նման կիրառությամբ հանդես են գալիս նաև այդ շրջանի փոխառյալ մի շարք բառեր՝ մուռտար («կեղտոտ», «գարշելի», «աղտոտ», «գազրելի»), գալում («անխիղճ», «անգութ»), պլմուննաթ («անողորմած», «սպերախտ»), կօզալ («գեղեցկուհի», «գեղուհի») և այլն.

Չը՛իս, մուռտա՛ր, թող զնայ ի բաց (49):

Զալն՛ւմ, ես քեզի կասեմ,  
Քո հօր տունըն՛ աւեր մընա (84)<sup>5</sup>:

Պլմուննա՛թ, զքեզ ո՞վ տեսեր է (241):

Կօզա՛լ, խղճա՛քո գերոյս (243)<sup>6</sup>:

Ա՛յ նազլում, գէմ Աստուած ունիս (164):

Հայրեններում կոչականները ավելի հաճախ գործածվում են կապակցության մեջ, քան թե մենաբառ: Հմնտ. ընդգծված մենաբառ կոչականներն ու կոչական կապակցությունները՝

Ասա՛, կտրի՛ճ, մի՛ վախեր (57):

Ճրա՛գ, քեզ երնեկ կու տամ (192)

և՛

Աստե՛ղք, դու հարիւր հազար (133):

Ա՛յ քարե կարմնջնի,  
Ի ձեզ չէ՞ անցել (169):

Մենաբառ և կոչական կապակցությունների գերադաս անդամի դերում հանդես եկող կոչականները հայրեններում գործածվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերով՝

<sup>4</sup> Բնագրում՝ Մարդ օրհնած, որ զքեզ բերել է (134):

<sup>5</sup> Միննույն բովանդակությունն ունեցող մեկ այլ հայրենում գտնում ենք՝ Քո հօրն տնանկն երերայ (248) տողը, որտեղ ընդգծված բառն առաջարկում ենք սրբագրել տնակն, քանի որ, անկասկած, խոսքն այստեղ վերաբերում է տուն – տնակ - ին:

<sup>6</sup> Ի դեպ, անսովոր է, սակայն հայրեններում կոչականի դերով միաժամանակ գործածվում են մի գոյական և մի փոխանուն ածական.

Ա՛յ իմ որոգայթ ու չար,  
Ուստի՞ եկիր ինձ հանդիպեցար (132):

նայած հաղորդվող նյութի բովանդակությանն ու այն բանին, թե ում է վերաբերում ասվածը՝ իրեն (սիրո խոստովանություն, բողոք, զարմանք և այլն), թե ուրիշ(ներ)ի (խորհուրդներ, խրատներ, կոչեր և այլն)։

Ա՛յ իմ հաւատիկ Աստուած,  
Չձգես ի ձեռքն սիրու (276)

և՛

Բ՞նչ եմ արերք քեզ, հոգի՛,  
Որ կասես, թե սիրտըս քար է (234):

Թագուր ու սուլտան ՚ի իշխանք,  
Որ ի բարձր այթոռ եք նստել.  
.... Ուղո՛րդ դատաստան արէք,  
Զի ձեզ այլ ատեն կայ պահել (393):

Հայրեններում կոչականներն ավելի հաճախ հանդես են գալիս սկզբնատողում.

Ա՛յ իմ եղբարց արիւն,  
Ապառաժ քարըն կենաս դուն.... (228):

Հա՛յ իմ նոնֆար ծաղիկ,  
Որ ծովուն մէջն կու մնաս.... (55):

Նկատենք, որ սկզբնատողի կոչականով հեղինակն ընթերցողին միանգամից ներքաշում է սպասվելիք գոծողության մեջ:

Սակայն, ինչպես կարելի է ենթադրել գործածության հաճախադեպությունից, հայրեններում կոչականները կարող են հանդիպել նաև այլ դիրքերում: Հմմտ.

– Հոգի՛, երբ գայդ ինձ ասիր,  
Նա ձերմակ ծոցս քի ծառայ (219):

Զատ ասայ, ձերմա՛կ, զատ ասայ (243)

և՛

Ողորմած ես, մարդասէր,  
Մի՛ անտես առներ ըզմեզ, Տէ՛ր (362):

Հայրենների դիտարկումը վկայում է, որ միջին տողերում գործածված կոչականները քանակի և գործածականության տեսանկյուններից զիջում են թե՛ սկզբնատողերում և թե՛ վերջնատողերում տեղ գտած կոչականներին:

Հայրեններում կոչականների ամենահաճախադեպ դիրքը միջանկյալ բառերի և նախադասության անդամների միջև է, որտեղ դրանց նախադաս տրոհումն անմիօրինակ բնույթ է կրում.

Է՛Ք, եար, ինձ բարիս առնուս (280):

Ա՛յ հոգի, դու ո՞ւր կերթաս (273):

Միջանկյալ բառ + կոչական կապակցությունը հազվադեպ կարող է հանդես գալ նաև նախադասության անդամների միջև.

*Խըմէ՛, է՛յ եար, իմ դիաց (50):*

Առավել տիպական են շարահյուսական այն կառույցները, որոնցում կոչականի հետ հանդես են գալիս ն՛ միջանկյալ բառ(եր), ն՛ լրացում(ներ)՝.

*Է՛ իմ կարմրիկ խնձոր (289):*

*Հա՛յ իմ աղանի պայծառ,*

*Որ թնիտ թէպրիկն է հազար (55):*

– Ա՛յ իմ մարգարտ շարոց,

*Ոսկեթել ծածկոցն ի վերայ (263):*

Սկզբնատողում խոսքն ավելի գեղարվեստական բնույթ է կրում, երբ հանդես են գալիս նախադաս լրացում(ներ)ով կոչական կապակցությունները.

*Ա՛յ իմ պզտրկից եարուկ,*

*Քո ամեն տեղիկտ աղէկուկ (261):*

– Ծո՛, թուխ ու գռուզ կտրիճ,

*Պագ հազար, թէ պարծենաս ոչ (218):*

Նկատելի է, որ կոչական կապակցությունների մեջ որոշակի արժեք են ներկայացնում որոշիչ լրացումները, որոնցով հեղինակը փորձում է ներկայացնել իր խոսակցի (վերջինս ավելի հաճախ սիրած աղջիկն է) յուրահատուկ գծերն ու բարեմասնությունները.

*Ա՛յ իմ նուռ ու նուշ բերան,*

*Նուռ ու նուշ, ծաղիկ ՚լ ըռահան (177):*

*Փոքրի՛կ, բոլորիկ դռնակ,*

*Որ քենէ՛ ծագեց լուսնակ (338):*

Հայրեններում կոչականների լրացումները գերազանցապես հանդիպում են նախադաս կիրառությամբ.

*Ա՛յ ի մեր մահալին մորճիկ,*

*Մեր աղբիւն ի ջուրն էս եկեր (253):*

– *Ուսկա կը գընամ, խո՛շ եար (235):*

*Իմ հոգուս հոգի եարում,*

*Քանի քո քովէտ գնացի... (160) և այլն:*

<sup>7</sup> Կոչականը հանդես է գալիս նաև անսովոր շարահյուսությամբ, ինչպիսին, օրինակ, բարդ ստորադասական կառույցի բաղադրիչ նախադասությունների միջև դիրքն է.

*Ասցի, թէ գտնում հանց եար,*

*Ա՛յ հոգեկ, որ այլ չէ սիրած (157):*

Ասվածը վկայում է այն մասին, որ աշխարհաբարը կոչականների լրացումների շարադասության տեսանկյունից միջինհայերենյան տարբերակի կրողն է: Մակայն հարկ է նշել, որ որոշ կիրառություններում պահպանվել է կոչականների և վերջինիս լրացումների գրաբարյան շարադասությունը.

– Յե՛տ գրնա, կըտրի՛ճ շըփացած (185):

Ալի՛ անհաստատելի,  
ՀաԲ, կերթամ ծովու ծառուած (106):

Կոչականով արտահայտված առարկան բնութագրող այդ բառերը խոսքի լակոնիզմի ամենահետաքրքրական դրսևորումներից մեկն են. բանն այն է, որ այս հնարանքով հեղինակը լուծում է մի կարևոր խնդիր. առանձին նախադասությամբ իր խոսակցին բնութագրելու փոխարեն, որը, բնականաբար, կընդարձակեր տվյալ խոսքի ծավալը (ստորոգման քերականական ակտ և այլն), հեղինակը դա կարող է անել՝ ընդամենը մեկ բնութագրող լրացում կիրառելով.

Ա՛յ իմ ճերմակածո՛ց բագա,  
Ճերմակծոց ու ծինն ի վերայ,  
Կանանչ կապաւոր մանչուկ,  
Եղնավիզ թ՛ինչ խօշ կու նայիս (192):

Հա՛յ իմ փոքրիկ շամամ.  
Քո ծոցուտ ամ ե՛րբ տիրանամ (167):

– Ա՛յ, կել չը՛խ, գայլ ու կատղած (261):

Ա՛յ իմ արծաթե գոպայ (261):

Ինչպես ցույց են տալիս դիտարկումները, կոչական կապակցությունների ծավալը սովորաբար տատանվում է երկուսից չորս-հինգ անդամների սահմաններում, սակայն որոշ հայրեններում կոչականները մի քանիսն են և գրավում են մի քանի տող: Պատճառն այն է, որ հեղինակը միննույն անձին, ում ուղղված է խոսքը, բնութագրում է տարբեր տեսանկյուններից՝ գործածելով բազմակի կոչական կապակցություններ.

Իմ սեր ՚ւ իմ առջի բարի,  
Իմ սիրած ՚ւ իմ սրտիս ուզած,  
Իմ տղայկութեան սիրած,  
՚Ի իմ հազար աչիչ հաւընած,  
Ոչ քեզի է վարդ պակաս,  
Ոչ կտրիճ աղւոր դիմացած.

Իմ հին սեր ՚ւ առջի յորդոր,

Իմ արև և իմ աստնուոր,

Իմ մանկութենէ սիրած,

Մի՛ կենար հետ ինձ նենգաւոր (153):

Գրնա՛, իմ հոգոյս հոգի,

Իմ սրտէ սիրա՛ծ սիրելի (294):

Սրտիկս գէթ գքեզ ուզած,

Ալ աղէկն ըսկի չի պիտաց (183):

Ոճական այս հնարանքը կարելի է հանդիպել միայն բացառիկ հայրեններում. բանն այն է՝ բազմակիության այս ձևը, որը վերաբերում է միննույն առարկային, կոչականի կրկնության դրսևորումներից մեկն է,



սակայն միայն իմաստի տեսանկյունից, քանի որ արտահայտության պլանում դրանք տարբեր են.

Նման կառուցվածքով հայրենները յուրահատուկ են նաև նրանով, որ միջոց են ծառայում հեղինակի բուն գեղումների անկաշկանդ արտահայտության համար:

Վերը բերված բազմակի կոչականներով կառույցներից էապես տարբերվում են այնպիսիք, որոնցում կոչականը պարզապես կրկնվում է.

ՄարիԲլ, մարիԲլ, դուռը բաց,  
Ես ի քու որդեկիդ նման (666)<sup>8</sup>:

Անշուշտ, ոճական այս հնարանքով ապահովվում է խոսքի հուզական կողմը, որն առավել տպավորիչ է դառնում այն ժամանակ, երբ կրկնվող կոչականներից երկրորդը բնութագրվում է որևէ հատկանիշով.

Բագա՛, տնաւե՛ր բագա, Աղվո՛ր, իմ հագա՛ր աղվոր,  
Գնացած տեղիկտ ինձ ասա (266): Դրախտին բեհեշտի խնձոր (153):

Որդի՛, հարըստի՛ որդի, Խնձո՛ր, իմ կարմի՛ր խնձոր,  
Ծիլ ոսկի, ծառ արմաւենի (180): Որ հասար ի յօր սիրելու (153):

Որոշ դեպքերում կոչականների բազմակիությունն առկա է՝ կոչական կապակցության փոխարեն, ինչպես՝

Իմ եար ի իմ կանաչ խիար,  
Թող չորնաս, թէ զիս մոռանաս (261):

Նայած խոսքային իրադրությանը՝ կոչականները ցույց են տալիս որոշակի կամ անորոշ հասցեատեր, կամ էլ արտահայտում են ընդհանրականության գաղափար:

Որոշակիության գաղափար կարելի է արտահայտել թե՛ հասարակ և թե՛ մանավանդ հատուկ գոյականներով ու փոխանուն բառերով: Օրինակ՝

– Ուրա՛խ լեր, կո՛յս Տալիթայ... (318):

Հա՛յ իմ մէկ ու մէկ Աստուած,  
Մէկութիւն քեզ կու վայլէ (330):

Քրիստո՛ս, Տէ՛ր իմ արքայ  
Գոհութիւն քեզ միշտ յարակայ (517):

– Աստուա՛ծ, մէկ ի վար հայէ (312):

– Մօլա՛յ, քէմ հերիք կանչես (181):

Պետք է նկատել, որ խոսքային որոշակի իրավիճակներում գործածվող կոչականները ցույց են տալիս որոշակի առարկա և ունեն ուղիղ իմաստ, ինչպես՝

– Չան նուռն, որ ի քեզ տվի,  
Կտրէ, տէ՛ս՝ քանի հաստ ունի....

<sup>8</sup> Նման կիրառությունները հայրեններում հազվադեպ են:

– Գնա՛յ, ծոյ տըղայ տըխմա՛ր,  
Ես գքեզ խելօք գիտե՛ի (162):

Անորոշություն և ընդհանրականություն արտահայտելու միջոց են ծառայում միայն հասարակ անունները՝ ուղիղ կամ փոխաբերաբար գործածված, և փոխանունները: Այսպես՝ եար, հոգի, աղուոր (աղուոր) և նման բառերով արտահայտված կոչականների կիրառությամբ ասվածին հաղորդվում է անորոշության գաղափար: Հեղինակը դրանով խուսափում է խոսքի հասցեատիրոջ որոշակիացումից, այն է՝ հատկանվան միջոցով կոնկրետ անձի դիմելուց, և հնարավոր չէ ենթադրել իրական հասցեատիրոջ ով լինելը<sup>9</sup>:

– Կտրի՛ճ, թէ բերես վկայ՝  
Չպագըն տամ աչացըս վերայ (79):

Տիլպե՛ր, քո հողիկդ եմ ես (94):

– Ես ու դուն, հոգե՛կ, ես ու դուն,  
Ես ու դուն օթվան սարերուն (91):

Խօ՛շ եար, քեզ լալով սէլամ (90) և այլն:

Որոշակի անձի դիմելուց խուսափելու մի միջոց է նաև անձնանիշ գոյականների փոխարեն իրանիշ գոյականներն իրրև կոչական գործածելը: Այս դեպքում, բնականաբար, հեղինակը դիմում է անձնավորման հնարանքին՝ միաժամանակ հնարավորություն ստանալով ասելիքը մատուցել փոխաբերական իմաստով: Ահա թե ինչպես է դիմում իր սիրած էակին հեղինակը.

Հա՛յ իմ պօղվատե՛ ուրաք,  
Ես թաց փէտ, զիս առեր՝ տաշ,  
Միրես զիս՝ շուտով սիրե,  
Հան հոգիս, յետ քեզ է ի քաշ (118):

Հայրեններում խոսակցի ով լինելը որևէ կերպ չբացահայտելու ընդունված ձևերից մեկն էլ, ինչպես նշեցինք, պարզապես կոչական չգործածելն է: Հատկապես սիրո թեմայով գրված տասնյակ հայրեններում հեղինակները խուսափում են որոշակի դիմումից և ասելիքը ձևակերպում առանց կոչականների.

Դու ելար ի ձեր տանէն,  
Զինչ էլնէ արևն ի մօրէն.  
Ծագէ լոյսն ի քո ծոցէն,  
Զինչ գարնան կայծակն ի յամպէն.  
Շատ երեց, շատ հաբեղա  
Իջուցեր քո սէրտ ի բեմէն.  
Զիս այլ սիրու տեր արիր,  
Հանեցիր իմ հօրն ի տանէն (232):

<sup>9</sup> Անշուշտ, խոսքի հասցեատիրոջ որոշակի կամ անորոշ լինելու հարցում ուղղակիորեն դեր ունեն տվյալ ժամանակաշրջանի բարբերն ու սովորույթները:

Կոչական չունեցող այսպիսի նախադասություններն ոճական տեսանկյունից հետաքրքիր են նրանով, որ թեև ունեն քերականորեն արտահայտված ենթակա, սակայն խոսքային իրավիճակը թերի ներկայացնելու պատճառով (բացակայում է հեղինակի խոսքը, որտեղ կարող էր ակնարկ լինել 2-րդ դեմքի դերանվամբ անորոշ անձ անվանող քերականական ենթակայի՝ որոշակիորեն ով լինելու մասին) հարում են անենթակա միակզավ նախադասություններին (հայտնի չէ, թե որոշակիորեն ում է դիմում խոսողը):

Բնական է, որ այս դեպքում խոսք անզավ չէր կարող լինել կոնկրետ խոսակից անվանող հատկանուններով արտահայտված կոչականների մասին<sup>10</sup>. չէ՞ որ սիրո թեմայով գրված տասնյակ հայրենների մեջ սիրած աղջկա անհանգստությունն ու դրանով պատճառաբանված խնդրանքը տղայից այն է, որ նա ծածուկ պահի իրենց սերը: Ահավասիկ՝

Ասի, թե՛ «Միրեմ ըզբեզ».  
 Լօք պրոկունքն ալ ի դէմս իխած.  
 – Միրեւ՝ նա սիրէ դու մէն,  
 Մի՞ք աներ այլ մարդու իմաց (233):

Լաֆուր շալն ուր տուն տարի,  
 Ծով աչոքն ըսաց, դր՝ ԳնաԲյ,  
 ԳնաԲ, գիշերով եկուր,  
 Նուր մարդ չիմանայ (708):

Արի՛ ու հնցկուն գնա՛յ,  
 Որ ծոցու տէրն չիմանայ (250):

Եթե անորոշությունն արտահայտվում է ն՛ անձնանիշ, ն՛ փոխաբերաբար կամ փոխանվանաբար գործածված բառերով (Լար, հոգեկ և այլն), ապա ընդհանրականության գաղափարի արտահայտման միջոց են ծառայում անձնանիշ եղբայր, մանուկ, մարդ գոյականները թե՛ Եզակի, թե՛ հոգնակի թվերով: Օրինակ՝

Սուտ է, որ կասեն, եղբա՛րք,  
 Թէ ընտանի կաքաւ չի լինի (146):

Ելայ, գնացի, եղբա՛յր,  
 Չը տեսայ ես հատ մի ճօհար (241):

Վայրի վարճինակդ եմ ես,  
 Արգելէ՛, ո՛ւ մարդ, թէ կարես (327):

Մանկտի՛ք, ձեր արևն ասեմ,  
 Լսեցի՛ լեզուս կապեցաւ (189):

Լինելով չափածո ստեղծագործություններ, որտեղ կարևորվում է խոսքի սեղանությունը, ուղղակի խոսք պարունակող հայրեններն աչքի են ընկնում նաև մեկ այլ առանձնահատկությամբ. դրանցում, ակտիվ կիրառությամբ

<sup>10</sup> Ստեղծագործական այդ ավանդությունը դեռ երկար ժամանակ արտահայտություն է գտնում սիրո թեմայով նաև այլ չափածո գործերում, միչև որ ավելի համարձակները կոչականների կամ այլ անդամների քերականական դերով գործածում են նաև հատկանուններ.

Բնձմե մի նեղրնա, իմ խոգու մասը, Մի՛ խագներ, Աշխեն ջան, դու սև, մի՛ք խագներ (Երզարան, Երևան, 1951, էջ 369), կամ՝ Խումար պառկե երես բաց,

Շոբայ, հոբայ, հոպպրտաբ դըմբա՛ (նույն տեղում, էջ 351):

աչքի ընկնող կոչականին հակառակ, միշտ չէ, որ կանոնավոր կերպով արտահայտություն է գտնում ուղղակի խոսքին առընթեր ենթադրվող հեղինակի խոսքը:

– Կարմիր ու ճերմակ երես,  
Քանի՞ մեկ զիմ սիրտն արունես.  
Անցնիս թուխ ամպեր լինիս,  
Յետև ամպ ու գոլ անես, զիս երես,  
Քանի՞ զաս էրած երես,  
Ա՛ն քեֆին ու դիր զիս ի ներս:  
– Հեռի՛ քեֆինն ի քենե,  
Հանսա ծոցս, արե՛կ, մուտ ի ներս (368):

Դիտարկումները ցույց են տալիս, որ կոչականները՝ որպես շարահյուսական անկախ միավորներ, խոսքի մեջ կարող են զուգադրվել տարբեր դիմային արտահայտությամբ ձևավորված նախադասությունների հետ<sup>11</sup>:

Ավելի հաճախ կոչական պարունակող հայրենները ձևավորվում են 2-րդ դեմքի բայերով արտահայտված նախադասությունների միջոցով.

Ո՞ւր էիր, ուստի՞ ց եկիր,  
Անծանոթ, ըզզիս սիրեցիր (127):  
Մի քնի՛ր, գալո՛ւմ, մի՛ քնիր (93) և այլն:

Այս դեպքում խոսքն անմիջականորեն ուղղվում է խոսակցին<sup>12</sup> և ավելի է արտահայտիչ, քան եթե վերաբերեր իրեն՝ հեղինակին (1-ին դեմք), կամ մեկ այլ ածի կամ անձանց (3-րդ դեմք): Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ երբեմն խոսքի հեղինակը դիմում է ինքն իրեն՝ ասելիքի մատուցման ձևը դարձնելով անսովոր և դրանով էլ՝ հանդիսավոր<sup>13</sup>: Նմանատիպ հայրենները ներքին խոսքի դրսևորումներ են: Ոճական այս հնարանքով հեղինակը փորձում է վերադիմավորվել՝ իր իսկ խոսքն ընդգծված ուղղելով իրեն<sup>14</sup>.

<sup>11</sup> Հայրենների մեջ կոչականի հետ կարող են զուգադրվել թե՛ երկկազմ, թե՛ միակազմ կառույցներ.

Հազար ամանաթ, հոգի ,  
Յետև ինձ ըզսէրըն թարկէ (235):  
Օ՞րո՞ք, գառնուկ, օ՞րո՞ք... (715):  
Բարև ու հազար բարև ,  
Արեգա՛կ, իմ լո՛յս ու արև՛ (200):

<sup>12</sup> Ուղղակի խոսքը հազվադեպ կազմված է լինում միայն կոչական կապակցությունից.

Կանչեցի, թե՛ «Եա՛ր աննման»... / Դարձաւ ու ճուղայ երես, / Թէ՛ Չեմ ես քո եարին նման (254):

<sup>13</sup> Հայրեններն այս տեսանկյունից աչքի են ընկնում ոչ միատարր կառուցվածքով. միշտ չէ, որ հայրենի հեղինակ-հերոսը խոսողն է. կան հայրեններ, որոնցում հեղինակը հանդես է գալիս իբրև խոսակից.

Էկան էն խամագ մարդիքն, / Թէ՛ Բե՛ք, զքո եարն մեզ ցըցու. / Տեսանք, թ՛ ի նչ շէնք ու սուրաթ ունի, / Որ արեր զքեզ ին՝ կապելու: / – Իմ եարն ի լուսնի նման՝ / Թուխ ամպի միջին է գալու (292):

<sup>14</sup> Ոճական այս հնարանքը հետագա դարերում դառնում է աշուղագուսանական ստեղծագործությունների բաղադրիչ տարրերից մեկը, որը դառնում է հիմնավոր վկայություն՝ այդ ստեղծագործությունների հեղինակային գործեր լինելու մասին, ինչպես՝

.... Սայաթ-Նովա, նազլու յարին գնած նոքարի նըման իս (Երգարան, էջ 532): .... Գուսան Աշուղ, միշտ սիրվեցիր դու մորից (նույն տեղում, էջ 481) և այլն:

– Խաչատուր, առնել լաւ է,  
Քան ասել և ոչ կատարել (458):

Ո՛վ Կեչառեցի մեղօք,  
Անդ չունիս ճար պատճառանաց (459):

Հայրենների շարքում ավելի զգացմունքային են խոսակցին ուղղված և նրա իսկ դեմքով գրվածները, հատկապես երբ, կոչականից բացի, դրանք պարունակում են ոչ թե չեզոք, այլ հարցական, հրամայական կամ բացականչական հնչերանգով խոսքեր.

Պատրո՛ն, մէկ մ՛ի վար հայէ,  
Տե՛ս, թէ՛ ի՞նչ բաներ կու լինի (179):

– Լուսի՛ն, քո արևտ ասեմ,  
Պահ մի կաց՝ ինչօր լուսանայ (181):

– Կտրի՛ճ, կու սիրես դու գիս,  
Մի՛ աներ շատ խալխի իմաց (184):

2-րդ դեմքով բայերի և կոչականների զուգադրման արդյունքում նկատվող արտահայտչականությունն ու տպավորչությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ կոչականն ինքն էլ օժտված է 2-րդ դեմքի քերականական կարգով<sup>15</sup>, որը, փաստորեն, հենց խոսակցի դեմքն է, և դառնում է մի տեսակ շոշափելի կապ՝ խոսքն առավել բնականորեն առաջ տանելու համար: Ասվածն աչքի է զարնում հատկապես այն հայրեններում, որոնք սկսվում են կոչականով կառուցված տողով:

Հա՛յ մեր մահալի մորճուկ,  
Մեր աղբիւրն ի ջուրն ես եկեր (56):

Լուսի՛ն, դու լուսով կացիր (248):

– Ա՛յ իմ մարգարտէ շարոց,  
Պագ մի տուր, որ մեռնիմ ես ոչ (218):

Ընթերցողի (ուսկնդրի) հետ կապն ինչ-որ ձևով ավելի սերտ դարձնելու նպատակով հայրեններից մի քանիսը պարտադիր սկսվում են 2-րդ դեմքին վերագրվող, այն է՝ խոսակցի ենթադրող ձայնարկությամբ.

Ծօ՛, լա՛ճ, երբ գայտ ինձ ասիր,  
Նա ապրիս բազում ժամանակ (232)<sup>16</sup>:

<sup>15</sup> Կոչականի 2-րդ դեմքի քերականական կարգով օժտված լինելու մասին կան մի շարք փաստարկներ, որոնցից մեկն էլ այն է, որ կոչականը, 2-րդ դեմքի դու կամ դուք գերադաս անդամի հետ կիրառվելու փոխարեն, գրական հայերենի նախորդ շրջաններում կարող էր կրել դ՝ դիմորոշ հոդ: Նշված հատկանիշի մասին է վկայում հետևյալ օրինակը՝

Շաքրէ եղեգին միջէն / Ես քաշած, քանց գլատի՛ ֆդ աղուր (153):

<sup>16</sup> Տասնյակ հայրեններում կոչականները իմաստային-քերականական կապի մեջ են ոչ միայն ենթակա-ստորոգյալ գույզի, այլ նաև նախադասության այլ անդամների հետ, մի հանգամանք, որ վկայում է դրանց՝ նախադասության լիարժեք անդամ լինելու մասին: Այսպես՝ հետևյալ երկտողում հայե՛ր կոչականը համաձայնության եղանակով կապակցվել է ոչ միայն դուք ենթակայի և կու լայք ու գիտեք ստորոգյալների հետ. նրանով է պայմանավորված նաև «Գիտեք, որ ձեր Տէրն տի գայ» նախադասության ձեր հատկացուցչի հոգնակի թվով արտահայտությունը.

Այս դեպքում կոչականի բացակայությունն առանձնապես չի զգացվում, եթե նույնիսկ հետագա ողջ միտքն արտահայտվի 1-ին կամ 3-րդ դեմքին վերաբերող նախադասությամբ, ինչպես՝

Ծո՛յ, այս մութ ու մլար տարիս,  
Քեզկէ չէր բերել մարն զիս (213):

Հայրեններում կոչականների հետ ավելի հաճախ հանդես են գալիս ա՛յ, է՛, է՛յ, ծո՛, ծո՛յ, հա՛յր և ո՛ւ ձայնարկությունները.

Ատ էր քո ամէն ումէտն,  
Ա՛յ հոգեկ, որ ինձ կու տայիր (159):  
Է՛ մարդ, որ աւերդ էս  
Հիմն դրել ու տուն կու շինես (403):

Այս կարգի կառույցների մեջ սովորաբար ընդունված է եզակի կոչականների կիրառությունը.

Կանչեմ՝ Ո՛հ, իմՏէ՛ր Աստուած,  
Ջամենայն դարիսն դու պահէ (241):  
Ա՛յ իմ թուխ ու թանկ մանկիկ (80):  
Է՛ իմ կարմրիկ խնձոր....(289):

Կան այնպիսի հայրեններ, որոնցում տեղ է գտել նաև խոսակցի պատասխանը: Արդյունքում ստացվում են լակոնիկ երկխոսություններ, և այս դեպքում հանգուցալուծումը տեղի է ունենում խոսակցի կողմից հնչած ուղղակի խոսքի միջոցով.

.... - Իմ բարձրգնաց լուսին,  
Չի տեսա՞ր զիմ եար մըջեցին.  
– Յերէկ եմ տեսեալ զքո եարն  
Ի յայգին ի Յակոբոսին (377):  
– Մանկտի՛ք, ձեր հոգուն համար,  
Ցըցուցէ՛ք ինձ ելնալու ճար.  
– Ասեմք քեզ ելնալու ճար.  
Մի՛ երթար դու յերկիր օտար (241):

Հեղինակի կողմից կոչական գործածվում է նաև 1-ին կամ 3-րդ դեմքի բայերով ձևավորված կառույցների մեջ.

Ա՛յ իմ անօրէն ջիուտ,  
Որ իմ սէրս ի քեզ չարար մուտ (217):

Հայե՛ր, ամ դուք է՞ր կու լայք, / Գիտէք, որ ձեր Տէրն տի գայ (326):

Նման կապ առկա է նաև հետևյալ օրինակներում.

Մարի՛կ, մարի՛կ, դուռը բաց, / Ես ի քու որդեկիդ նման (666): / Հա՛յ իմ փոքրիկ շամամ, / Քո ծոցուտ ամ է՞րք տիրանամ (167): / Ա՛յ իմ անօրէն ջիուտ, / Որ իմ սէրս ի քեզ չարար մուտ (217):

Խա՛ժ աչք, ես քեզ սիրեմ (248):

*Մակայն երբեմն էլ միևնույն կոչականի հետ գործածվում են դիմային տարբեր արտահայտություններով ձևավորված նախադասություններ.*

– Մանկտի՛ք, ձեր արևտ ասեմ,  
Ցուցուցէք ինձ ելնելու ճար (55):

Իմեար, երբ կու հառաչեմ՝  
Իմ սրտէս մուխ կելնէ հատի (61):

*Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայրենների մեծագույն մասում հեղինակի խոսքն ուղղակիորեն կամ փոխաբերաբար կարող է վերաբերել իրեն, խոսակցին (խոսակիցներին) կամ ուրիշ(ներ)ի: Բնական է, որ այս դեպքում հաճախ հարկ է առաջանում գործածելու կոչական, որին դիմում է խոսողը՝ արտահայտելով իր զգացումներն ու դատողությունները: Կոչականով կառուցված խոսքը բնութագրվում է լրացուցիչ արտահայտչականությամբ: Վերջինս պայմանավորված է կոչականին յուրահատուկ արտասանությամբ, որն էապես տարբերվում է սովյալ խոսքի շղթան կազմող մյուս բոլոր միավորներից: Կոչականով կառուցված խոսքն ավելի աշխույժ է ու կենդանի: Տվյալ խոսքային իրադրության մեջ կոչական կիրառելով՝ հեղինակն իր խոսքը դարձնում է ավելի տպավորիչ, իսկ խոսքային իրավիճակը՝ առավել իրական:*

## СТИЛИСТИЧЕСКАЯ РОЛЬ ОБРАЩЕНИЙ В АЙРЕНАХ

ГУРГЕН ХАЧАТРЯН

### Резюме

Изучение айренов показывает, что в большинстве случаев авторское слово в них непосредственно или метафорически обращено или к самому лирическому герою, собеседнику (-кам) или к некому третьему лицу (-ам). Естественно поэтому применение обращения, к которому прибегает говорящий для выражения различных чувств и суждений. Поэтическая строка, содержащая обращение, характеризуется особой выразительностью. Это само по себе обусловлено эмоциональностью обращений как синтаксической формы, что выделяет данную конструкцию из ряда других. Конструкции, включающие обращение, позволяют автору придать поэтическому слову большую выразительность, а речевой ситуации – реальность.

---

**THE STYLISTIC VALUE OF VOCATIVES IN HAYRENS***GURGEN KHACHATRYAN***S u m m a r y**

The study of hayrens shows that in most cases the author's speech in them may directly or figuratively refer either to the lyric hero, to the interlocutor(s) or to others. It is obvious that in this case it is necessary to use the vocative whom the speaker addresses to expressing various emotions and thoughts. The speech formed with vocative is characterized by additional expressiveness: the latter depends on the specific pronunciation of the vocative which essentially differs from all the other elements. The speech formed with vocative lets the author make his speech more impressive and the verbal situation – more real.